



# Diocese of the Armenian Church of North America

ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆ ՀԱՅՈՑ  
ՀԻՒՍԻՍԱՅԻՆ ԱՄԵՐԻԿԱՅԻ

630 Second Avenue, New York 16, N.Y. ★ MURRAY HILL 6-0710

ՄԻՈՆ ԱՐԲԵՊԻՍԿՈՊՈՍ ՄԱՆՈՒԿՅԱՆ  
Առաջնորդ

Archbishop Sion Manougian  
Primate

Թիւ 3483  
Փետրուար 6, 1962

Արժանաշնորհ  
Տ. Միքայէլ ԲՆՆՅ. Պուլիթրօ  
Հոգեւոր Հովիւ եւ Նախագահ Միակէս խորհուրդի  
Ս. Յարութիւն Եկեղեցւոյ  
նիւ Պրիթըն.

Սիրելի Տէր Հայր.

Ստացած ենք Ձեր տեղեկագիրը, որով կը հաղորդէք թէ Ձեր նախագահու-  
թեամբ՝ 1962, Յունուար 28ին գումարուած համայնքիդ Միակէս ժողովը կատա-  
րած է Միակէս խորհուրդի մասնակի ընտրութիւն, եւ ներկայացնելով ընտրու-  
կութեան արդիւնքը, կը խնդրէք ընտրուած անձերուն վաւերացման պաշտօնագիրը:

Նկատի ունենալով որ Ձեր Միակէս ժողովը տեղի ունեցած է թեմական  
Կանոնադրութեան տրամադրութեանց համաձայն, եւ ընտրուած անձերը, իբրեւ Ե-  
կեղեցւոյդ նախանձախնդիր ու նուիրեալ անդամներ, կը վայելեն Ձեր համայնքի  
ժողովուրդին վստահութիւնը, այսու կը վաւերացնենք անոնց ընտրութիւնը, ըստ  
հետեւեալին.

- Տիարք՝ Հան Մալճեան
- Մօնթի Պաղտիկեան
- Փիթի Եկազարեան
- Հարրի Ազարիկեան
- Կրէկորի Արրահամեան
- Հարրի Պէրպէրեան

Տրուած ըլլալով որ Ձեր տեղեկագրին մէջ չէք գրած Ձեր համայնքի  
ժողովուրդի, Եկեղեցւոյ պատկանողներուն ու տրատու անդամներուն թիւը,  
կը յանձնարարենք որ առաջին առիթով՝ Ձեր Միակէս խորհուրդի նոր դէւանի  
կազմի անուն-հասցէներուն հետ միատեղ Առաջնորդարան ղրկէք:

Օրհնելով Միակէս խորհուրդիդ նոր կազմը, կը մաղթենք Ձեզի եւ  
պատուարժան անդամներուն յաջող ու արդիւնաւոր գործունէութիւն, ի պայ-  
ծառութիւն Ս. Եկեղեցւոյդ եւ ի շինութիւն համայնքիդ մեր սիրեցեալ ժո-  
ղովուրդին:

Մնամք Տիրաւանդ սիրոյ ողջունիւ  
Աղօթաբար

ՄԻՈՆ ԱՐԲԵՊԻՍԿՈՊՈՍ  
Առաջնորդ Հայոց Ամերիկայի